ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՑ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 5-13-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ) *

ՀՏԴ 34 (091) *DOI: 10.52063/25792652-2025.1.24-9*

ՎՈԼՈԴՅԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Հայաստանի Հանրապետության գիտությունների
ազգային ակադեմիայի փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ԼՂՀ Գերագույն դատարանի նախագահ (2002-2007թթ.),
ԼՂՀ վաստակավոր իրավաբան,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Vladimirhovsepyan1953@mail.ru
ORCID: 0009-0007-9249-048X

Սույն հոդվածի նպատակն է ցույց տալ, որ պատմական Մեծ Հայքի թագավորության Արևելից կողմանց միջնադարյան վարչաքաղաքական կացության ուսումնասիրությունը ոչ միայն գիտական, այլև քաղաքական նշանակություն ունի, քանզի Ադրբեջանի պատմագրությունը, քաղաքական նկատառումներով նենգափոխում է հայ ժողովրդի պատմությունը՝ կասկածի տակ դնելով հայկական պետականությունն անգամ: Եվ դա այն դեպքում, երբ մեր օրերում, Ադրբեջանի ղեկավարությունը ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության տարածքը լկտիությամբ ադրբեջանական է համարում: Ուսումնասիրության խնդիրներից են՝

1. ***Նոր հիմնավորումներով ճշգրտել Աղվանից թագավորության վերացման, մարզպանության ստեղծման, Հայաստանից պոկված Արցախ և Ուտիք գավառների՝ Աղվանքին միացման ժամանակի հետ կապված հարցերը:***
2. ***Հայոց Արևելից կողմանց վարչաքաղաքական կարգավիճակն Աղվանից մարզպանության կազմում:***
3. ***Աղվանից մարզպանության վերացումից հետո ձևավորված տեղական հայկական իշխանական տների կացությունը IX-XIII դարերում:***

Աշխատանքի ընթացքում կիրառվել են մի շարք հատուկ մեթոդներ, մասնավորապես՝ կառուցվածքային, պատմա-իրավական, համակարգային, վերլուծականև այլն:

Աշխատանքում հիմնավորել ենք, որ Մեծ Հայքի թագավորության վերացումից հետո նրա արևելյան նահանգները՝ Արցախն ու Ուտիքը, հայտնվելով մեկ այլ վարչաքաղաքական միավորի՝ Աղվանքի կազմում, մնացին զուտ հայկական, ինչը հիմք հանդիսացավ հայկական պետականության հետագա շարունակականության՝ Համամ Արևելցու թագավորության, Փառիսոսի և Խաչենի իշխանությունների, Խամսայի մելիքությունների,

* Հոդվածը ներկայացվել է 22.01.2025թ., գրախոսվել՝ 20.02.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2025թ.:

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի, 1991-2023 թվականներին՝ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության կարգավիճակներով:

Հիմնաբառեր՝ *միջնադար, Մեծ Հայքի թագավորություն, քրիստոնեություն, Սասանյան Պարսկաստան, Արցախ, Ուտիք, Աղվանք, Հայոց Արևելից կողմանք, Արաբական խալիֆայություն, Խաչենի իշխանություն:*

Ներածություն

Ավելի քան մեկ դար է, ինչ պատմական Մեծ Հայքի միասնական թագավորության Արևելից կողմանքի, հատկապես, նրա Արցախ նահանգի (մարզի, գավառի) բնակչության ինքնորոշման իրավունքի հարցը քննարկման առարկա էր դարձել նախկին Խորհրդային Միության կուսակցական և պետական մարմիններում, իսկ նրա փլուզումից հետո՝ մի շարք միջազգային ատյաններում: Ներկա ժամանակներում, երբ Ադրբեջանն Արցախի Հանրապետության բնակչության նկատմամբ պետական մակարդակով հակահայ գործողություններ և էթնիկ զտումներ իրականացրեց (2023թ.), որի հետևանքով արցախահայությունը բռնի տեղահանվեց, և երկրի պետականութունը դադարեց գոյություն ունենալուց, հայ ժողովրդի համար արցախյան հիմնահարցի պատմահիրավական հայեցակետերի ուսումնասիրությունը և ճշմարտության վերհանումն ավելի պահանջված ու հրատապ է դառնում:

Հոդվածի ուսումնասիրության առարկան վաղ և ուշ միջնադարի մի հատվածն է, և այն վերաբերում է առանցքային նշանակություն ունեցող կարևորագույն հարցերից մեկին, որը բազում անհերքելի պատմահիրավական փաստեր է պարունակում պատմական Ուտիք և Արցախ նահանգների՝ (գավառների) բացառապես հայկական լինելու մասին:

Հայոց Արևելից կողմանց միջնադարյան վարչաքաղաքական կացության և իրավական հայեցակետերի լիարժեք և համակողմանի ուսումնասիրությունը ժամանակից բխող պահանջ է՝ տարածաշրջանային ռազմական անկայուն վիճակի պայմաններում:

Հայոց Արևելից կողմանքը Մեծ Հայքի թագավորության կազմում

Համաձայն օտար և հայ պատմիչների, աշխարհագրագետների (Ստրաբոն,Պտղոմեոս, Պլինիոս Ավագ, Դիոն Կասսիոս, Ստեփանոս Բյուզանդացի, Ագանթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Կորյուն, Եղիշե, Անանիա Շիրակացի և այլք)՝ Մեծ Հայքի թագավորության հյուսիսարևելյան սահմանը Կուր գետն է եղել, որից այն կողմ՝ մինչև Կովկասյան լեռնաշղթայի փեշերը և Ալազան գետից մինչև Կասպից ծովը՝ Աղվանք պետությունը:

Ըստ «Աշխարհացոյց» միջնադարյան աշխարհագրական երկասիրության՝ Մեծ Հայքի թագավորությունը (մ.թ.ա. 331 – մ.թ. 428), բաղկացած էր տասնհինգ աշխարհից (նահանգից) և 178 գավառից, որի սահմաններն իր հզորության գագաթնակետին ձգվում էր Կովկասյան լեռներից մինչև Եգիպտոս և Կասպից ծովից մինչև Սև ծով: Այդ տասնհինգ վարչական միավորներից տասներորդն Արցախ նահանգն էր, որն ուներ տասներկու գավառ և ընկած էր Սյունիքից արևելք՝ նրա անմիջական հարևանությամբ, ու տարածվում էր մինչև Ուտիք: Վերջինս տասներկուերորդ նահանգն էր, ուներ յոթ գավառ, գտնվում էր Արաքս գետից արևմուտք, Արցախի և Կուր գետի միջև (Սուրեն Երեմյան, Հայաստանը ըստ Աշխարհացոյց-ի 33):

Արցախը, հյուսիս-արևելքից և արևելքից, սահմանակից լինելով Ուտիքին, իր ընդգրկած տարածքով մոտավորապես համապատասխանում էր Ադրբեջանի Կետաբեկի և Դաշքեսանի շրջաններին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ողջ տարածքին, Քարվաճառի, Ջեբրայիլի շրջաններին, Աղդամի, Ֆիզուլիի և Կուբաթլուի շրջանների մի մասին: Ուտիքի տարածքը մոտավորապես համապատասխանում էր

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի որոշ մասերին, Ադրբեջանի Ղազախի, Թոուզի, Շամխորի, Խանլարի, Կասում-Իսմայլովի, Միր-Բաշիրի, Բարդայի, Եվլախի շրջաններին, և Աղդամի Շահումյանի ու Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանների մի մասին (Հենրիկ Սվազյան, Աղվանից աշխարհի պատմություն 71-74):

Վաղ միջնադարում Արցախ և Ուտիք նահանգների տարածքը հայկական աղբյուրներում կոչվել է նաև «Արևելից կողմանք հայոց», «Արևելից կողմանք», «Հյուսիս–արևելից կողմանք», «Արևելք», որովհետև այն Մեծ Հայքի արևելյան (հյուսիսարևելյան) երկրամասն էր, նաև՝ «Աղվանից կողմանք», «Աղվանք», քանի որ այն հետագայում մտավ «Աղվանք» մարզպանության մեջ, և «Արևելից կողմանք հայոց», «Արևելք», «Արևելից կողմանք» անունների փոխարեն առավել գործածական դարձան «Աղվանից կողմանք», «Աղվանք» անվանումները, իսկ Մաթևոս Ուռհայեցու հաղորդմամբ՝ «Աշխարհ Աղվանից, որ ասի՝ խորին աշխարհ Հայոց» (Մաթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն 230; Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 2-րդ 32: Ասատուր Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը 146):

Հայոց Արևելից կողմանքը, Մայր հայրենիքի մյուս վարչական միավորների պես, բնակեցված է եղել դեռևս խոր հնադարից, այն էլ՝ հիմնականում հայերով: Գրավոր աղբյուրներն այդ են վկայում: Այսպես՝ Ստրաբոնը, խոսելով հայոց թագավոր Արտաշես Ա-ի մասին, վկայում է, որ նրա ժամանակներում Հայաստանում բոլորը խոսել են միևնույն լեզվով, այսինքն՝ հայերենով (Մանանդյան Հակոբ, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Բ, մասն Ա 127):

Արցախը իր բազմադարյան պատմության ընթացքում հանդես է եկել տարբեր աշխարհագրական անուններով՝ Ուրտեխինի, Օրքիստենե, Արցախ, Փոքր Սյունիք, կամ կազմելով մեկ այլ միավորի բաղկացուցիչ մաս՝ ստացել նրա անվանումը, ինչպես՝ Ծավդեից աշխարհ, Խաչեն, Ղարաբաղ և այլն:

Չնայած քրիստոնեությունն ավելի վաղ էր մուտք գործել հայոց աշխարհ, որտեղ տարածված էր հեթանոսությունը, սակայն վաղ միջնադարի արշալույսին՝ 301 թվականին, Մեծ Հայքում քրիստոնեությունը հռչակվեց որպես պետական կրոն՝ Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսական գլխավորությամբ (Փաուստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց 400; Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց 310; Ղազար Փարպեցւոյ Պատմություն Հայոց. Թուղթ առ Վահան Մամիկոնեան 18; Մանանդյան 233):

Նոր կրոնն անմիջապես տարածվեց երկրի հյուսիսարևելյան կողմում՝ Արցախում և Ուտիքում: Գրիգոր Լուսավորիչն Արցախի Հաբանդ գավառի Ամարաս ավանում (գտնվում է ԼՂՀ Մարտունու շրջանի Սոս և Մաճկալաշեն գյուղերի մոտ) եկեղեցի կառուցեց և իր թոռանը՝ Գրիգորիսին, կարգեց Հայոց Արևելից կողմանց եպիսկոպոս: Հայկական բարձրավանդակին տիրելու համար Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության պայքարն ավարտվեց նրանով, որ կողմերը 387 թ. պայմանագիր կնքեցին, որի հետևանքով երկրի հիմնական մասն անցավ Պարսկաստանին: Դրանով Մեծ Հայքը երկատվեց, և նրա տարածքում ձևավորվեցին երկու կիսանկախ թագավորություններ (Փաուստոսի Բիւզանդացւոյ 400, Խորենացի 310; Փարպեցւոյ 18; Մանանդյան 233): Բյուզանդական մասում հայոց թագավորությունն անմիջապես վերացվեց, իսկ պարսկական մասում կատարվեց քիչ ուշ: Հայաստանի առաջին բաժանումից հետո Հայոց Արևելից կողմանքը շարունակում էր մնալ Արշակունյաց թագավորության կազմում, այսինքն՝ վարչաքաղաքական կացության որևէ փոփոխություն տեղի չի ունեցել:

Ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական Հայաստանում սկզբնական շրջանում պետական գրագրությունները կատարվում էին հունարենով կամ ասորերենով : Հայ գրերի ստեղծումը ժամանակի պահանջ էր, և դա կատարվեց 405 թ. ՝ Մեսրոպ Մաշտոցի կողմից՝ հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի և հայոց

արքա Վռամշապուհի գործուն աջակցության ներքո (Կորյուն, Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի, աշխատությամբ՝ Ա. Մաթևոսյանի 46-48; Խորենացի 327): Դա աննախադեպ իրադարձությունն էր, և երկրով մեկ բացվեցին հայկական դպրոցներ: Մաշտոցն արդեն 415-420 թթ. իր 36 զինվորներով գտնվում էր Հայոց Արևելից կողմերում, որտեղ և Ամարասում բացեց առաջին դպրոցներից մեկը: Հայ ժողովրդի համար Արցախ և Ուտիք գավառները կարևոր հանգրվաններ էին՝ քրիստոնեությունը և դպրությունն Աղվանից աշխարհում տարածելու համար: Հայոց Արևելից կողմերում գրերի գյուտի տարածումը և դպրոցների բացումը հզոր խթան հանդիսացան երկրամասի կարգավիճակներին հանգույն հայ իրավական մտքի այնպիսի խոշոր հուշարձանների ստեղծմանը և կիրառմանը, ինչպիսիք են Աղվենի ժողովի սահմանադրական կանոնները (488), Պարտավի եկեղեցական ժողովի կանոնները (768), Դավիթ Ալավկա որդու «Կանոնական օրինադրությունը» (1138), Մխիթար Գոշի «Գիրք դատաստանին» (1193) և մատենագիտական մի շարք կարևոր աշխատություններ:

Հայոց Արևելից կողմանց գավառների նախարարները (իշխանները) կարևոր դերակատարություն են ունեցել երկրի ներքին և արտաքին հարաբերություններում: Նախարարների պարտականությունը ձևակերպված էր Մեծ Հայքի ռազմական ուժերի քանակի և դասակարգման մասին պետական հրովարտակում՝ «Զորանամակում», ուր նշված էր նաև զորքերի այն քանակը, որ պարտավոր էին դուրս բերել նրանք, երբ հայրենիքը վտանգի մեջ էր: Ըստ «Զորանամակի»՝ Ծավդեից (Արցախի) և Գարդմանից (Ուտիքի) գավառների տերերից յուրաքանչյուրը կռվի ժամանակ հանում էր հազարական հեծյալ: Մեկ այլ պատմական փաստաթղթի՝ «Գահնամակի համաձայն՝ Ուտիքն ու Արցախը հայ նախարարների համակարգում և հայոց արքունիքում ունեցած իրենց պատվաստիճանով ու տեղով զբաղեցնում էին 23-րդ և 28-րդ տեղերը՝ 70 նախարարական տների միջև (Նիկողայոս Ադոնց, Հայաստանը Հուստինանոսի ժամանակաշրջանում 241-242, 249-251; Սվազյան 76; Յակոբեան Ալեքսան, «Գահնամակ Ազատաց Եւ Տանուտէրանց Հայոց» Եւ «Զաւրանամակ»,- «Բազմավէպ» 3-4):

Հայոց Արևելից կողմանքն «Աղվանք» վարչաքաղաքական միավորի կազմում

Սասանյան Պարսկաստանը կարճատև հանդուրժեց իր գերիշխանության տակ անցած Հայաստանի անկախությունը, ուստի 428թ. վերացրեց այն՝ վերածելով մարզպանության, սակայն, սկզբնական շրջանում պահպանելով նախարարների ներքին ինքնավարությունը:

Մարզպանական Հայաստանն իր մեծությամբ զգալիորեն զիջում էր թագավորական շրջանի Հայաստանին, իսկ ստեղծման պահից որոշ ժամանակ անց ծայրամասային հողերի գոտին, այդ թվում՝ Հայոց Արևելից կողմանքը (Ուտիքը և Արցախը) նրա սահմաններից դուրս գտնվեցին: Վերացվեց նաև Աղվանից թագավորությունը, որի վերացման, մարզպանության ստեղծման, Արցախ և Ուտիք գավառների անջատման ու Աղվանքին միացման թվականի հարցում պատմաբանները միակարծիք չեն: Մի դեպքում այն կապում են Մեծ Հայքի առաջին բաժանման (387) (Адонц Никогайос. Армения в эпоху Юстиниана: политическое состояние на основе нахарарского строя 230; Еремян Сурен, Политическая история Албании 3-7 вв.: Очерки истории 314; Մնացականյան 18; Մանանդյան 240-241), մեկ այլ դեպքում՝ Մեծ Հայքի թագավորության վերացման (428) հետ (Ուլուբաբյան Բագրատ, Աղվանից թագավորական տան հարցի շուրջը 53, 60; Ուլուբաբյան Բագրատ, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության 127; Հարությունյան Բաբկեն, Մեծ Հայքի թագավորության հյուսիսարևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը 387-451թթ. , 88-89, իսկ երրորդները գտնում են, որ դա տեղի է ունեցել

Ավարայրի ճակատամարտից (451) հետո (Սվազյան 197, 204, 205; Акопян Алексан, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках 98-103):

Մեր կարծիքով՝ խնդրո առարկա հարցում կարող է պարզություն մտցնել 444 թ. Շահապիվանում (գտնվում է պատմական Հայաստանի հին Բայազետ բնակավայրի շրջակայքում) գումարված եկեղեցական ժողովը և նրանում ընդունված պարտադիր սահմանադրական կանոնները («Կանոնագիրք Հայոց» Ա հատոր 422-466): Ժողովում ընդունված որոշման ներածականից նկատելի է, որ կանոնները պարտադիր են եղել Թորգոմա տան (ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ 40; Խորենացի 22, 23, 38, 39, 40, 41; Փավստոս Բուզանդ 63, 64, 90, 120, 229, 267), և Արևելից կողմանց համար (Կանոնագիրք Հայոց 426): Իսկ դա նշանակում է, որ ժողովի հրավիրման ժամանակ Արցախ և Ուտիք նահանգները դեռևս մարզպանական Հայաստանի կազմի մեջ էին գտնվում: Հարցի վրա լույս է սփռում նաև պատմիչ Եղիշեն, ով նկարագրել է Ավարայրի ճակատամարտի (451) նախօրեին հայոց աշխարհի բոլոր ամուր կողմերում, այդ թվում և՝ Արցախում, մարզպան Վասակ Սյունեցու ծավալած պառակտչական գործողությունները, պատերազմից հետո ապստամբների՝ Արցախի անտառներում թաքնվելը, որտեղից և պարսիկների դեմ պարտիզանական պայքար մղելը և Հոնաց աշխարհի տերերին՝ ուխտադրուժության մասին հիշեցնելը (Եղիշե, Ե դար, Վարդանի և Հայոց պատմության մասին 69, 90-92): Իսկ եթե հաշվի առնենք, որ Ավարայրի ճակատամարտին մասնակցել է Արցախի զորագունդը՝ Բակ իշխանի գլխավորությամբ (Եղիշե 58; Բագրատ Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը 93-98; Վահրամ Բալայան, Արցախի պատմություն 73-78), ապա ակնհայտ կլինի, որ Վ դարի կեսերին Արցախը դեռևս Հայաստանի մասն էր կազմում՝ կրելով նրա ճակատագիրը:

Այսպիսով՝ Աղվանից թագավորության վերացման և մարզպանության կազմավորման (461), մարզպանական Հայաստանից Արցախ և Ուտիք գավառների անջատման ու նորաստեղծ Աղվանքի մարզպանությանը միացման գործընթացները տեղի են ունեցել Ավարայրի ճակատամարտից հետո, որի պայմաններում էականորեն փոխվել է ինչպես Աղվանքի, այնպես էլ Հայոց Արևելից կողմանց վարչաքաղաքական կացությունը: Նոր ստեղծված վարչաքաղաքական միավորը կրում էր «Աղվանք» անունը՝ կլանելով իր մեջ Արցախ և Ուտիք նահանգների ընդհանուր աշխարհագրական անվանումը (պարսկական և արաբական աղբյուրներում երկրամասը նշվել է «Առան» անվանումով): Անկասկած է, որ Հայաստանում և Աղվանքում մարզպանական վարչակարգերի ստեղծումը հանգեցրել է տարածքային փոփոխությունների: Հաշվի առնելով, որ բուն Աղվանքի տարածքը 23 հազար քառ. կմ . էր, իսկ Արցախ և Ուտիք գավառների տարածքը միասին վերցրած կազմում էր շուրջ 22 հազար քառ. կմ. , ուստի Վ դարի 2-րդ կեսին Աղվանքի տարածքն ընդլայնվեց և դարձավ ավելի քան 45 հազար քառ. կմ (Երեմյան 120): Նշված թվերը վկայում են, որ Աղվանքին միացված հայկական գավառներն իրենց տարածությամբ մոտավորապես հավասար էին բուն Աղվանքին: Նույնը կարելի է ենթադրել նաև բնակչության առումով: Այլ կերպ ասած՝ Աղվանքի շուրջ կեսը Հայաստան էր: Այդ առումով, քաղաքական ասպարեզներում իշխող դիրքը, հիմնականում անցնում է հայ իշխանների (նախարարների) ձեռքը:

Թագավորական իշխանություններն անդրկովկասյան երկրներում վերացնելուց հետո պարսիկները ձեռնամուխ եղան Հայքը, Վիրքը և Աղվանքը Պարսկաստանին միաձուլելու քաղաքականությանը, սակայն լուրջ դիմադրության հանդիպեցին: Այդ երկրներում հակապարսկական ապստամբություններ են բռնկվել՝ սպարապետ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ: Երկրի քաղաքական անկայուն վիճակը, ներքին և արտաքին պայմանները ստիպել են պարսից թագավորին ընդունել Վ. Մամիկոնյանի առաջարկած պայմանները, և 484 թ. Նվարսակում կնքվել է պայմանագիր, որի ուժով Հայոց մարզպանի և սպարապետի պաշտոնը տրվել է Վ.

Մամիկոնյանին: Վերականգնվել են նախարարների իրավունքները և ազատությունները: Ձեռք է բերվել կրոնի ազատություն: Եվ, որպես Նվարսակի պայմանագրից բխող պահանջի բավարարում, նույն իրավունքները տրվել են նաև Աղվանից մարզպանության ազնվականներին, որտեղ և իշխանության գլուխ է անցել Առանշահիկ Վաչագան թագավորը (485-510): Դեռ ավելին՝ պարսից շահը, հաշվի առնելով կատարված իրողությունը, որոշ արտոնություններ է տվել Վաչագանին, այդ թվում՝ Կուր գետի աջափնյա մասում բնակվող աղվանական ցեղերին կառավարելու համար:

Վաչագան թագավորի գործունեության պատմությունը շարադրված է պատմիչ Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» գրքում, որում նկարագրված իրադարձությունները հիմնականում տեղի են ունենում Կուր գետի աջափնյա մասում, այսինքն՝ Հայ Աղվանքում (Կաղանկատվացի 35-59): Իսկ գրքի վերջին ԻԳ գլխից նկատելի է, որ Աղվանքի հայրապետների հիմնական մասը եղել է Գարդմանի (Ուտիքի գավառներից մեկը) կամ Արցախի առաջնորդությունից (Կաղանկատվացի 267-271):

Վաչագան արքան շատ կարճ ժամկետում կարողացել է առաջ մղել երկրի մտավոր և մշակութային զարգացումը և այդ ենթատեքստում թագավորն անձամբ օրինակ էր ծառայում: Սակայն դա բավական չէր: Եվ նրա գահակալության օրոք ստեղծվեց օրենքների ժողովածու (Կանոնական Սահմանադրություն), և երկիրը զարգացավ հայկական սահմանադրական կանոններով և օրենքներով:

Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև Հայաստանի երկրորդ բաժանումը (591) Հայոց Արևելից կողմանց վարչաքաղաքական կացության վրա որևէ ազդեցություն չունեցավ: Ուտիքն ու Արցախը շարունակեցին մնալ Աղվանքի կազմում՝ Պարսկաստանի հպատակության տակ:

VII դարի առաջին տասնամյակներում Աղվանից աշխարհը պարսկա-բյուզանդական պատերազմների և վաչկատուն խազարների ասպատակությունների թատերաբեմ էր դարձել՝ մատնելով երկիրը սովի և համաճարակի: Նույն դարի 30-ական թվականներին Արաբական թերակղզում տեղի ունեցած քաղաքական ու կրոնական տեղաշարժերի արդյունքում ձևավորված Արաբական խալիֆայությունը դարձավ միջնադարի հզոր տերություններից մեկը: Արաբները կարճ ժամկետում նվաճեցին պարսկական բոլոր նահանգները և բյուզանդական մի շարք տարածքներ: Նրանք 640–650 թթ. երեք անգամ արշավեցին Հայաստան, իսկ երկրորդ արշավանքի ժամանակ (642-643) Ատրպատականի կողմից մտան Աղվանք և ասպատակեցին անդրկովկասյան երկրները: Մի կարճ ժամկետով Հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունուն և Արևելից իշխան Ձվանշիրին հաջողվել է հաշտության եզրեր գտնել արաբների հետ՝ ընդունելով հակառակորդի գերիշխանությունը, ինչը շարունակվեց մինչև VIII դարը:

Անդրկովկասը վերջնականապես նվաճելու նպատակովարաբները VIII դարի սկզբներին վերստին ռազմական գործողություններ ծավալեցին: Նրանց հաջողվեց տիրել Հայաստանին, Վրաստանին և Աղվանքին ու այդ երեք երկրներից կազմել մեկ ընդհանուր վարչական միավոր՝ ոստիկանություն: Այն Հայաստանի անունով կոչվում էր «Արմինիա», որի կենտրոնը սկզբում Դվին քաղաքն էր, ապա՝ 789-ից Պարտավը: Թեև արաբները չխաթարեցին Աղվանքի ներքին վարչաքաղաքական կառուցվածքը, սակայն մասամբ սահմանափակեցին երկրի իշխանների իրավունքները:

Հայ Աղվանքում տեղական իշխանությունների կազմավորումը և նրանց պայքարն օտար իշխողների դեմ

Մինչև IX դարի 2-րդ կեսը Հայ Աղվանքի վարչաքաղաքական կացության վերաբերյալ տվյալները կցկտուր են, սակայն պատկերը փոխվում է, երբ, շնորհիվ Մուշում, Տարոնում, Վասպուրականում, Արցախում և այլ վայրերում ծագած հակաարաբական ապստամբությունների, ուժերի հարաբերակցությունն անցնում է

հայերի կողմը և հայ ժողովուրդը՝ Աշոտ Բագրատունու գլխավորությամբ, կարողացավ վերականգնել իր կորցրած պետականությունը (885):

Հակաարաբական պայքարի պանծալի էջեր ցույց տվեցին Արցախի իշխանները: Միայն Արցախի հարավային հատվածում, Առանշահիկ իշխան Եսայի Աբու Մուսեն քսանութ անգամ չափվեց ամբողջ Անդրկովկասը հրի մատնած արաբ զորավար Բուղայի բանակների հետ և միշտ էլ հաղթանակներով դուրս եկավ: Չնայած վերջում խորամանկությունը հաղթեց քաջությանը և հերոսը քշվեց տաժանակրության (Թովմա Արծրունի և Անանուն 188-203), բայց պայքարը շարունակեց քաջ իշխանի քաջ թոռը՝ Գագիկը, որ Բագրատունիների գերագահության ներքո վերականգնեց անկախությունն Արցախի հարավային մասում, որի իշխանությունը վիմագիր արձանագրություններում նշված է «թագավորություն» եզրույթով, իսկ պաշտոնը՝ Աղվանից պետության «իշխանաց իշխան» խրոխտ տիտղոսով (Դիվան հայ վիմագրության, պրակ 5, Արցախ 169, 173):

Հայաստանի Բագրատունիների հետ միաժամանակ Արցախի կենտրոնական և հյուսիսային շրջաններում վերականգնվեց Հայ Աղվանքի պետականությունը՝ «Արևելից մեծ իշխան» Համամ թագավորի գլխավորությամբ (Կաղանկատվացի 262-263): Այնքան մեծ էր Համամի հեղինակությունը, որ նա կարողացավ արաբական գերությունից ազատել Հայոց հայրապետ Գևորգին: Ավելի ուշ, Ուտիք նահանգի մեկ հատվածում՝ Շամքոր գետի վերին ավազանում, ստեղծվեց Փառիսոսի պետական կազմավորումը, որն իր տիրապետության տակ առավ Գարդմանը, Ձորագետը և Ուտիքի ուրիշ հողեր:

Հայոց Արևելից կողմանքում գոյություն ունեին նաև ավելի մանր իշխանություններ, որոնց տերերը նույն Առանշահիկ տոհմի ժառանգներն էին, սակայն չէին օգտվում իշխանապետի ինքնավարությամբ (Բագրատ Ուլուբաբյան, Արցախի պատմությունը 60-66): Այդ բոլոր պետական կազմավորումները գտնվում էին Բագրատունյաց թագավորության գերագահության ներքո (Հայկական համառոտ հանրագիտարան, հատոր առաջին 442,443, Атлас Нагорно-Карабахской Республики 51):

Բագրատունյաց թագավորության կործանումից հետո իրանական-քրդական ցեղախմբերից մեկին՝ Շեդադյաններին, հաջողվեց տիրել Գանձակ քաղաքին, իսկ XI դարի 2-րդ կեսին քաղաքը դարձավ թուրք-սելջուկների էմիրության կենտրոնը: Միայն մի կարճատև ժամանակով, հյուսիսարևելյան Հայաստանում շարունակեց գոյատևել Կյուրիկյան կամ Աղվանից թագավորությունը (972-1113), որի հարավարևելյան սահմանները հասնում էին մինչև Մռավի լեռնաշղթան և Ինջա գետը, այսինքն՝ այդ թագավորությունն իր մեջ ներառում էր նաև հյուսիսային Արցախի մի մասը (Հայկական համառոտ հանրագիտարան, հատոր երկրորդ 707, 708; Լեո 612):

XI դարի վերջերին Վրաստանը կարողացավ թոթափել սելջուկյան լուծը և վերականգնել իր անկախությունը: Այդ ազատագրական պայքարի կռիվներին ակտիվ մասնակցություն ունեցան հայոց զորաջոկատները՝ հայ զորավարների մասնակցությամբ: Օտարերկրյա զավթիչներից հայկական հողերի մաքրումը կատարվեց Սարգիս Զաքարյանի որդիների՝ Զաքարե ամիրսպասալարի և Իվանե աթաբեկի անմիջական ղեկավարությամբ: Զաքարյան եղբայրներն ազատագրել են նաև Գարդմանը, Տավուշը, Շամքոր, Պարտավ և Բայլական քաղաքները (Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն 123; Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն 316):

Եթե Զաքարյան եղբայրների կողմից հյուսիսային Արցախի հողերն ազատագրելու վերաբերյալ քիչ թե շատ տվյալներ են պահպանվել, ապա հարավային Արցախի վերաբերյալ կարելի է ենթադրել, որ երկրամասի բնիկ տերերը, օգտվելով հարմար պահից, ինքնուրույն են թոթափել օտարի լուծը: Այսպես՝ Հաթերքի տեր և Արցախի գահերեց իշխան Հասան Մեծը 1182 թվականին Դադիվանքի պատերից

մեկի վրա թողած արձանագրության մեջ հայտնում է, որ մղել է շատ պատերազմներ և հաղթել իր թշնամիներին (Դիվան 198, 199):

Զաքարյանների իշխանապետության շրջանում Արցախ-Խաչենը բաժանված էր երեք իշխանությունների՝ Ներքին Խաչեն, Միջնարցախ և Վերին Խաչեն; Այս երեքի իշխաններն էլ խնամիությամբ կապված էին Զաքարյան տոհմի հետ (Ուլուբաբյան Բագրատ, Խաչենի իշխանությունը 114-123:): Այդ տոհմի օրոք ծնունդ առան մի շարք նոր իշխանական տներ, որոնցից Արցախում՝ Հասան-Ջալալյանների և Դոփյանների իշխանական տները:

Թուրք-սելջուկյան և մոնղոլական վաչկատուն ցեղերի տիրապետության շրջանում (XI-XIII դարեր), պատմական Արցախի տարածքների մեծ մասում կազմավորվում է Խաչենի իշխանությունը, որի տարածքն ընդգրկում էր Սևանա լճի արևելյան ափերը, Մարտունու, Ասկերանի, Աղդամի, Մարտակերտի, Շուշիի, Քաշաթաղի, Շահումյանի (Քարվաճառի) և ներկայումս թուրք-ազերիների ձեռքին գտնվող հայկական Շահումյանի շրջանը: Խաչենի իշխանության մի ճյուղն էլ տարածվել էր հյուսիսային Արցախում՝ «Փառիսոսի թագավորություն» անվամբ: Երկու հայկական իշխանությունները գտնվել են Բագրատունյաց թագավորության հովանու ներքո:

Երբ 11-րդ դարի առաջին կեսին ավարառու թուրք-սելջուկները սկսեցին ասպատակել անդրկովկասյան երկրները, Արաբական խալիֆայությունը և Բյուզանդական կայսրությունն իրենց մայրամուտն էին ապրում, տրոհվել էր Բագրատունյաց թագավորությունը: Այդ պատճառով սելջուկները կարողացան լայնածավալ պետություն ստեղծել, և նրանց տիրապետությունը տարածվում էր նաև Հայաստանի, Վրաստանի և Առանի (Աղվանքի) վրա: Նվաճված Հայաստանը, Ատրպատականը և Աղվանքը (Առանը) մտնում էին մի խոշոր վարչական միավորի մեջ, որի կառավարումը հանձնված էր սուլթանական ընտանիքի անդամներից մեկին:

Մոնղոլ-թաթարներն առաջին անգամ Դերբենտի դռնով Աղվանք մտան 1220 թվականին և սփռվեցին Անդրկովկասով մեկ (Կիրակոս Գանձակեցի 38): Մոնղոլների ասպատակությունների ժամանակ Խաչենի տերը՝ Արցախի իշխանական տոհմի ամենաականավոր ներկայացուցիչ Հասան Ջալալն էր (1214-1261), որ մեծամեծ նվերներով, ընծաներով կարողացավ հաշտություն կնքել մոնղոլների հետ և, որպես հավատարմության նշան, նրանց հետ պատերազմի էր գնում (Կիրակոս Գանձակեցի 192, 193): Հասան-Ջալալը վիմագրերում հանդես է գալիս. «ԲՆԱԿԱՒՈՐ ԻՆՔՆԱԿԱԼ ԲԱՐՁՐ ԵՐ ՄԵԾ ԱՐՑԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ, ԹԱԳԱՒՈՐ ԽԱՒԽԱՆԱԲԵՐԴԻ ՅՈԳՆԱՍԱՀՄԱՆ ՆԱՀԱՆԳԱՒՔ», «Աստծո արքա… Իշխան Խաչինոյ և Ըռանա» (Դիվան 38, 88) խրոխտ տիտղոսներով: Դժվար չէ կռահել, որ նման բարձրահունչ տիտղոսներ կրող անձն օժտված է եղել պետական հզոր իշխանությամբ, որի տիրապետությունը, բացի պատմական Արցախից, տարածվել է հարևան հայկական գավառների, այսինքն՝ ամբողջ Հայ Աղվանքի վրա՝ ներառյալ մինչև Կուրի և Արաքսի միախառնման վայրը:

Հասան-Ջալալին փոխարինեց նրա անդրանիկ որդին՝ Աթաբեկը, որ Արցախի վիմագիր արձանագրություններում նույնպես հանդես էր գալիս Արցախի իշխանաց իշխան խրոխտ տիտղոսով: Նա մինչև 1287 թվականը կառավարեց երկիրը՝ ժառանգելով հոր իշխանական տաղանդը, շինարարական եռանդը և բարեմասնությունները: Մոնղոլական ավերիչ արշավանքները շարունակվեցին նաև 14-րդ դարում, որին ավելացան Լենկ-Թեմուրի ասպատակությունները, որոնց անդրադառնալը դուրս է մեր այս աշխատանքի շրջանակներից:

Եզրակացություն

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ հարկ է եզրահանգել, որ սույն աշխատանքը նպատակ է հետապնդել հետազոտելու, թե Մեծ Հայքի թագավորության անկախութ-

յան կորստից հետո նրա Արցախ և Ուտիք նահանգները, որոնք հայ մատենագրության մեջ կոչվում են Հայոց Արևելից կողմանք, 461 թվականին Սասանյան Պարսկաստանի կողմից նորաստեղծ Աղվանից մարզպանությանը բռնակցվելուց հետո, պատմական որոշակի ժամանակահատվածներում, պետականության առումով ինչպիսի՞ վարչաքաղաքական կարգավիճակով հանդես եկան և, այդ կարգավիճակներին հանգույն, ինչպիսի՞ պետահիրավական կանոններ և ինստիտուտներ էին գործում:

Աշխատանքում նաև ներկայացվել է, որ Մեծ Հայքի արևելյան նահանգները՝ Ուտիքն ու Արցախը, վաղ միջնադարում, ակամա կտրվելով մայր հայրենիքից և հայտնվելով արաբական, թուրքական և մոնղոլ-թաթարական լծի տակ, կուլ չգնացին դրանց ագրեսիվ քաղաքականությանը, այլ ընդհակառակը, ըստ էության, մնացին հայկական և պետականության տարբեր՝ Արցախի Առանշահիկ թագավորության, Համամ Բարեպաշտի թագավորության, Փառիսոսի և Խաչենի իշխանությունների, Խամսայի մելիքությունների, Ղարաբաղի Ազգային կառավարության, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի, Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության կարգավիճակներով, շարունակեցին գոյատևել մինչև 2023 թվականի հոկտեմբեր ամիսը՝ կազմելով հայ ժողովրդի հազարամյա պատմության մի մասը:

Հետևաբար՝ Հայոց Արևելից կողմանց, մասնավորապես՝ նրա արցախյան հատվածի պատմահիրավական կարգավիճակին նվիրված ամեն մի ուսումնասիրություն կարևոր ներդրում է ադրբեջանական պատմագրության նենգափոխումների և ռազմա-քաղաքական նկրտումների բացահայտման գործում, ուստի՝ այդ հարցում պետք է բավարարվել ոչ միայն պատասխանով, այլև՝ մի շարք դեպքերում նախահարձակ լինել, որովհետև խնդրո առարկայի հասցեատերը հայ ժողովրդի արցախյան հատվածն է, որ, դիմանալով ժամանակի փորձություններին, դարեր շարունակ կիսել է հայոց ընդհանրական ճակատագիրը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադոնց Նիկողայոս, *Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում*, Երևան, 1987:
2. Ասատուր Մնացականյան, *Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը*, Երևան, 1966:
3. ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ, եբրայական եի յունական բնագիրներից թարգմանուած, Stuttgart, 1989-30M-063):
4. Արծրունի Թովմա և Անանուն, *Պատմություն Արծրունյաց տան*, Ներածությունը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Վրեժ Վարդանյանի, Երևան, 1978:
5. Բալայան Վահրամ , *Արցախի պատմություն*, Երևան, 2002:
6. *Դիվան հայ վիմագրության*, պրակ 5, Արցախ, Երևան, 1978:
7. Եղիշե, Ե դար, *Վարդանի և Հայոց պատմության մասին*, Երևան, 1994:
8. Երեմյան Սուրեն, *Հայաստանը ըստ Աշխարհացոյց-ի*, Երևան, 1963:
9. Լեո, *Երկերի ժողովածու տասը հատորով, հատոր երրորդ*, Երևան, 1967:
10. *«Կանոնագիրք Հայոց»* Ա հատոր, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964:
11. Կիրակոս Գանձակեցի, *Հայոց պատմություն,* թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, 1982:
12. Կորյուն, *Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի*, աշխատությամբ՝ Ա Մաթևոսյանի, Երևան, 1994:
13. *Հայկական համառոտ հանրագիտարան, հատոր առաջին*, Երևան, 1994,
14. *Հայկական համառոտ հանրագիտարան, հատոր երկրորդ*, Երևան, 1995:
15. *Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 2-րդ*, Երևան, 1976:

16. Հարությունյան Բաբկեն, *Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թթ.* «Բանբեր Երևանի Համալսարանի», 1976, թիվ 2:

17. Ղազար Փարպեցւոյ *Պատմություն Հայոց. Թուղթ առ Վահան Մամիկոնեան/* քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Տ. Մալխասյանցի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1982:

18. Յակոբեան Ալեքսան. «Գահնամակ Ազատաց Եւ Տանուտէրանց Հայոց» Եւ «Զաւրանամակ»,- «Բազմավէպ», 2013:

19. Մաթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898:

20. Մանանդյան Հակոբ, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Բ*, մասն Ա, Երևան, 1957:

21. Մովսես Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, Քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991:

22. Մովսես Կաղանկատվացի, *Պատմություն Աղվանից աշխարհի*, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վարագ Առաքելյանի Երևան, 1969;

23. Սվազյան Հենրիկ, *Աղվանից աշխարհի պատմություն*, Երևան, 2009:

24. Ուլուբաբյան Բագրատ, *Աղվանից թագավորական տան հարցի շուրջը*, Լրաբեր հասարակական գիտությունների, 1971, թ. 4:

25. Ուլուբաբյան Բագրատ, *Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության*, Երևան, 1981:

26. Ուլուբաբյան Բագրատ, *Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը,* Երևան, 1998:

27. Ուլուբաբյան Բագրատ, *Արցախի պատմությունը, Սկզբից մինչև մեր օրերը*, Երևան, 1994:

28. Ուլուբաբյան Բագրատ, *Խաչենի իշխանությունը X-XV դարերում*, Երևան, 1976:

29. Փաւստոսի Բիւզանդացւոյ *Պատմութիւն Հայոց*, բնագիրը Ք Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1987:

30. Օրբելյան Ստեփանոս, *Սյունիքի պատմություն*, Երևան, 1986:

31. Адонц Никогайос, *Армения в эпоху Юстиниана*: политическое состояние на основе нахарарского строя. Спб., 1908.

32. Акопян, Алексан. *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван, 2022.

33. Еремян, Сурен. *Политическая история Албании* 3-7 вв.: Очерки истории СССР, 3-9 вв., М., 1958.

WORKS CITED

1. Adonc Nikoghayos, Hayastany' Hustinanosi jhamanakashrjanum [Armenia in the age of Justinian], Erevan, 1987. (in Armenian)

2. Asatur Mnacakanyan, Aghvanic ashxarhi grakanut'yan harceri shurjy' [On the Issues of the Literature of World of Aghvanq], Erevan, 1966. (in Armenian)

3. Astoiac'ashoinch matean hin ei nor ktakaranneri, ebrayakan ei yunakan bnagirneric t'argmanuac' [The Book of God's Revelation of the Old and New Testaments, translated from Hebrew and Greek], Stuttgart, 1989-30M-063). (in Armenian)

4. Arc'runi T'ovma ev Ananun, Patmut'yun Arc'runyac tan, Nerac'ut'yuny', t'argmanut'yuny' ev c'anot'agrut'yunnery'` Vrejh Vardanyani [History of the Artsrunyan House, introduction, translation and notes by Vrezh Vardanyan], Erevan, 1978. (in Armenian)

5. Balayan Vahram, Arcaxi patmut'yun [History of Artsakh], Erevan, 2002. (in Armenian)

6. Divan hay vimagrut'yan [Armenian Lithography Archive], prak 5, Arcax, Erevan, 1978. (in Armenian)

7. Eghishe, E dar, Vardani ev Hayoc patmut'yan masin [On Vardan and the History of Armenia], Erevan, 1994. (in Armenian)

8. Eremyan Suren, Hayastany' y'st Ashxarhacoyc-I [Armenia according to Ashkharhatsuyts], Erevan, 1963. (in Armenian)

9. Leo, Erkeri jhoghovac'u tasy' hatorov, hator errord [Collection of Works], Erevan, 1967. (in Armenian)

10. «Kanonagirq Hayoc» [Armenian Code] A hator, ashxatasirut'yamb Vazgen Hakobyani, Erevan, 1964. (in Armenian)

11. Kirakos Gand'akeci, Hayoc patmut'yun [The History of Armenia, transl., Introduction and References by Varag Arakelyan], t'argmanut'yuny', ar'ajabany' ev c'anot'agrut'yunnery' Varag Ar'aqelyani, Erevan, 1982. (in Armenian)

12. Koryun, Varq S. Mesrop Mashtoci [The behavior of Saint Mesrop Mashtots], ashxatut'yamb՝ A Mat'evosyani, Erevan, 1994. (in Armenian)

13. Haykakan hamar'ot hanragitaran [Short Armenian Encyclopedia], hator ar'ajin, Erevan, 1994. (in Armenian)

14. Haykakan hamar'ot hanragitaran [Short Armenian Encyclopedia], hator erkrord, Erevan, 1995. (in Armenian)

15. Haykakan Sovetakan Hanragitaran [Short Armenian Encyclopedia], hator 2-rd, Erevan, 1976. (in Armenian)

16. Harut'yunyan Babken, Mec' Hayqi t'agavorut'yan hyusis-arevelyan marzeri varcha-qaghaqakan kacut'yuny' 387-451 t't'. [Administrative and Political Situation in the Northeastern Regions of the Kingdom of Great Armenia, 387-451] «Banber Erevani Hamalsarani», 1976, t'iv 2. (in Armenian)

17. Ghazar P'arpecwoy Patmut'yun Hayoc. T'ught' ar' Vahan Mamikonean [The History of the Armenians. The Document to Vahan Mamikonyan]/ qnnakan bnagiry' G. Ter-Mkrtchyani ev S. T. Malxasyanci, ashxarhabar t'argmanut'yuny' ev c'anot'agrut'yunnery' B. Ulubabyani, Erevan, 1982. (in Armenian)

18. Yakobean Aleqsan. «Gahnamak Azatac Ew Tanute'ranc Hayoc» [Letter of the Armenian Freedmen and Landlords] Ew «Zawranamak»,- «Bazmave'p», 2013. (in Armenian)

19. Mat'eos Ur'hayeci, Jhamanakagrut'iwn [Chronicle], Vagharshapat, 1898. (in Armenian)

20. Manandyan Hakob, Qnnakan tesut'yun hay jhoghovrdi patmut'yan [Research Theory on the History of the Armenian People], hator B, masn A, Erevan, 1957. (in Armenian)

21. Movses Xorenaci, Patmut'iwn Hayoc, Qnnakan bnagiry' ew nerac'ut'iwny' M. Abegheani ew S. Yarut'iwneani [The History of Armenia, Research original text and introduction by M. Apeghian and S. Haroutiunian], Erevan, 1991. (in Armenian)

22. Movses Kaghankatvaci, Patmut'yun Aghvanic ashxarhi, t'argmanut'yuny', ar'ajabany' ev c'anot'agrut'yunnery'՝ Varag Ar'aqelyani [History of the Aghvan world, translation, preface and notes by Varag Arakelyan], Erevan, 1969. (in Armenian)

23. Svazyan Henrik, Aghvanic ashxarhi patmut'yun [History of the Aghvan world], Erevan, 2009.

24. Ulubabyan Bagrat, Aghvanic t'agavorakan tan harci shurjy' [On the Issue of the Royal House of Aghvan], Lraber hasarakakan gitut'yunneri, 1971, t'. 4. (in Armenian)

25. Ulubabyan Bagrat, Drvagner Hayoc Arevelic koghmanc patmut'yan [Episodes of the History of the East of Armenia], Erevan, 1981. (in Armenian)

26. Ulubabyan Bagrat, Hayoc Arevelic koghmanc ekeghecin ev mshakuyt'y' [The Church and Culture of The Eastern part of Armenia], Erevan, 1998. (in Armenian)

27. Ulubabyan Bagrat, Arcaxi patmut'yuny', Skzbic minchev mer o'rery' [The History of Artsakh, from the Beginning to our Days], Erevan, 1994. (in Armenian)

28. Ulubabyan Bagrat, Xacheni ishxanut'yuny' X-XV darerum [Khachen's Rule in the 10th-15th Centuries,], Erevan, 1976. (in Armenian)

29. P'awstosi Biwzandacwoy Patmut'iwn Hayoc [The History of Armenia], bnagiry' Q Patkanyani, t'argmanut'yuny' ev c'anot'agrut'yunnery' St. Malxasyani, Erevan, 1987. (in Armenian)

30. O'rbelyan Step'anos, Syuniqi patmut'yun [The History of Syunik], Erevan, 1986. (in Armenian)

31. Adonc Nikogajos, Armenija v jepohu Justiniana. Politicheskoe sostojanie na osnove naharарskogo stroja [Armenia in the Age of Justinian: Political Condition on the Basis of the Nakharar System]. Spb., 1908. (in Russian)

32. Akopjan Aleksan, Albanija-Aluank v greko-latinskih i drevnearmjanskih istochnikah [Albania-Aluank in Greco-Latin and Ancient Armenian sources], Erevan, 2022. (in Russian)

33. Eremjan Suren, Politicheskaja istorija Albanii 3-7 vv. Ocherki istorii SSSR, 3-9 vv., [Political History of Albania, 3rd-7th centuries: Ocherki istorii SSSR, 3rd-9th centuries] M., 1958. (in Russian)

ADMINISTRATIVE AND POLITICAL SITUATION OF THE ARMENIAN EASTERN REGIONS IN THE 5th-13th CENTURIES (BRIEF ESSAY)

VOLODYA HOVSEPYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia,
Institute of Philosophy, Sociology and Law, Ph.D. Student,
NKR Supreme Court, Chairman (2002-2007),
Honoured Lawyer of NKR,
Yerevan, the Republic of Armenia

The purpose of this article is to demonstrate that studying the medieval administrative and political landscape of the eastern provinces of Greater Armenia holds not only scholarly but also political importance. This is particularly relevant given that Azerbaijani historiography, driven by political motives, distorts the history of the Armenian people and even questions the existence of Armenian statehood. This occurs against the backdrop of contemporary Azerbaijani leadership openly laying claims not only to Artsakh but also to the territory of the Republic of Armenia.

The objectives of the research are:

1. to interpret the issues related to the abolition of the kingdom of Aghvan, the establishment of the marzpanate and the time of accession of the provinces of Artsakh and Utik, which separated from Armenia, to Aghvan using new substantiations.

2. to determine the administrative and political status of the eastern provinces of Armenia within the Aghvan province.

3. to present the situation of the local Armenian princely houses after the abolition of the marzpanate of Aghvan in the IX-XIII centuries.

In the course of the work we applied a number of special methods, namely: structural, historical-legal, systematic, analytical, etc. We have substantiated that after the abolition of the marzpanate of Aghvan in the IX-XIII cc.

In this paper, we have demonstrated that following the dissolution of the Kingdom of Greater Armenia, its eastern provinces—Artsakh and Utik—though incorporated into the administrative-political unit of Caucasian Albania, remained ethnically and culturally Armenian. This continuity laid the foundation for the subsequent development of Armenian statehood in various forms, including the Eastern Kingdom of Hamam, the Principalities of Parisos and Khachen, the Melikdoms of Khams, the Nagorno-Karabakh Autonomous Oblast, and the Nagorno-Karabakh (Artsakh) Republic from 1991 to 2023.

Key words: *Middle Ages, Kingdom of Greater Armenia, Christianity, Sassanid Persia, Artsakh, Utik, Aluank, Eastern region of Armenia, Arab Caliphate, Principality of Khachen.*

АДМИНИСТРАТИВНО-ПОЛИТИЧЕСКОЕ БЫТОВАНИЕ В ВОСТОЧНЫХ ПРЕДЕЛАХ АРМЕНИИ В V-XIII ВВ. (КРАТКИЙ ОБЗОР)

ВОЛОДЯ ОВСЕПЯН
соискатель Института философии, социологии и права
Национальной Академии Наук Республики Армения,
председатель Верховного суда НКР (2002-2007թթ.),
Заслуженный юрист НКР,
г. Ереван, Республика Армении

Цель данной статьи — показать, что изучение средневекового административно-политического бытования восточных провинций исторического Великого Армянского царства имеет не только научное, но и политическое значение. Азербайджанская историография по политическим мотивам искажает историю армянского народа, ставя под сомнение сам факт существования армянской государственности. И это происходит в условиях, когда сегодня руководство Азербайджана считает азербайджанскими не только территорию Арцаха, но и территории Республики Армения.

Основные задачи исследования:

1. с уточнёнными аргументами определить вопросы, связанные с ликвидацией Кавказской Албании, созданием марзпанства, временем присоединения к Кавказской Албании отколовшихся от Армении провинций Арцах и Утик.
2. административно-политический статус восточных провинций Армении в составе марзпанства Кавказской Албании.
3. положение армянских княжеских домов, сформировавшихся после ликвидации марзпанства Кавказской Албании, в IX-XIII веках.

В процессе работы применены ряд специальных методов, в частности: структурный, историко-правовой, системный, аналитический и другие.

В статье обосновывается, что после уничтожения Великого Армянского царства его восточные области — Арцах и Утик, — оказавшись в составе другого административно-политического образования, Кавказской Албании, остались чисто армянскими. Это стало основой для дальнейшего продолжения армянской государственности в форме царства Хамама Восточного, княжеств Парижана и Хачена, меликств Хамсы, автономной области Нагорного Карабаха, а с 1991 по 2023 год — Республики Нагорный Карабах (Арцах).

Ключевые слова: *средновековье, царство Великая Армения, христианство, Сасанидская Персия, Арцах, Утик, Алуанк, Восточный край Армении, Арабский халифат, княжество Хачена.*